ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ՇՈՂԱԿԱԹ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 22-ին, շաբաթ օրը, Էջմիածնի Ս. Շողակաթ եկեղեցում, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի, սարկավագական կոչում ստացան հոգևոր ճեմարանի երկու ուսանողներ՝ Մովսես և Պողոս Տերտերյանները:

Հուսիչ էր ձեռնադրության պահը, երբ հնչեց «Աստուածային և երկնաւոր շնորհս...» շարականը: Նորընծա սարկավագները ծնրադիր, ձեռքերը վեր բարձրացրած, հրաժարվեցին աշխարհիկ կյանքից:

Այնուհետև ձեռնադրիչ սրբազան հայրը, ձեռնադրության աղոթքները կարդալով, կատարեց ձեռնադրության արարողությունը և նորընծաների ուսերին գցեց սարկավագական ուրարներ՝ դրանով իսկ իրավունք տալով նրանց ս. պատարագի ընթացքում սպասավորելու Ս. Սեղանին և պատարագիչ քահանային:

Նոյեմբերի 30-ին, կիրակի օրը, Էջմիածնի Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

Ս. պատարագի ընթացքում, ձեռամբ պատարագիչ սրբազան հոր, կատարվեց քահանայական ձեռնադրություն: Քահանայական ձեռնադրություն և օծում ստացան քահանայից դասընթացն անցած բարեշնորհ Մովսես սրկ. Տերտերյանը և բերաշնորհ Պողոս սրկ. Տերտերյանը:

Խարտավիլակի պաշտոնը կատարեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը, որը և հինգացս ձեռնադրության վկայեց նորընծաների հոգևոր-խմացական պատրաստակամության մասին:

Այնուհետև ձեռնադրիչ սրբազան հայրը, ձեռքը դնելով նորընծաների գլխին, արտասանեց ձեռնադրության հոգեպարար աղոթը: Ապա ձեռնադրիչ սրբազանը օրհնությամբ և աղոթքով նորընծաներին շնորհեց քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար և շուրջառ:

Օծման խորհրդավոր արարողության ընթացքում ձեռնադրիչ սրբազան հայրը սուրբ մեռոնով օծեց նորընծաների ճակատն ու ձեռքերը՝ անվանելով նրանց Տ. Մովսես քահանա և Տ. Պողոս քահանա:

Նորընծաները ս. խորանից ժողովրդին տվեցին իրենց անդրանիկ օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Ապա ձեռնադրիչ սրբազան հայրը տվեց իր օրհնությունը նորընծաներին՝ հորդորելով նրանց լինել հավատարիմ սպասավորներ Հայ Եկեղեցու և նվիրյալ ծառաները մեր ժողովրդի:

Նորընծաներին շնորհավորեցին բոլոր ներկաները:

Տ. ՄՈՎՍԵՍ ՔԱՀԱՆԱ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Ծնվել է 1960 թվականի ապրիլի 20-ին Էջմիածնում, քահանայի ընտանիքում:

1977 թվականին ստացել է միջնակարգ կրթություն Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Չպդր գյուղում:

1977—1980 թվականներին սովորել և ավարտել է Ռոստովի բժշկական ուսումնարանը՝ ձեռք բերելով բուժակի մասնագիտություն:

Մեկ տարի իր մասնագիտությամբ աշխատելուց և այդ ընթացքում տեղի հայոց եկեղեցու երգչախմբում գործոն մասնակցություն ունենալուց հետո, 1981 թվականին կոչակոչվել է սովետական բանակ:

Զորացրվելուց և մեկ տարի հայոց եկեղեցում որպես դպիր ծառայելուց հետո, 1985 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան՝ քահանայից դասընթացներին մասնակցելու համար:

Տ. ՊՈՂՈՍ ՔԱՀԱՆԱ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Ծնվել է 1962 թվականի փետրվարի 23-ին Էջմիածնում, քահանայի ընտանիքում:

1979 թվականին ավարտել է Ռոստովի միջնակարգ դպրոցը:

Նույն թվականին ընդունվել է տեղի շինարարական ինստիտուտ:

1981—1983 թվականներին ծառայել է սովետական բանակում: Զորացրվելուց անմիջապես հետո շարունակել է իր ուսումը՝ միաժամանակ գործոն մասնակցություն բերելով տեղի հայոց եկեղեցու երգչախմբում:

1985 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան՝ քահանայից դասընթացներին մասնակցելու համար:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա քահանաներին և մաղթում, որ նրանք միշտ եռանդով ու նվիրվածությամբ իրենց ուժերը ի սպաս դնեն Հայ Եկեղեցու բարգավաճման գործին: